

## 10.1. Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի (CCJE) Եվրոպական դատախազների խորհրդակցական խորհրդի (CCPE)

«Դատավորները և դատախազները ժողովրդավարական հասարակությունում»  
վերաբերյալ միասնական կարծիք

Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի (CCJE) կարծիք N 12 /2009/  
Եվրոպական դատախազների խորհրդակցական խորհրդի (CCPE) կարծիք N 4 /2009/

# ԲՈՐԴՈՅԻ ՀՈՎԱԿԱԳԻՐ

## Դատավորները և դատախազները ժողովրդավարական հասարակությունում

Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհուրդը (CCJE) և  
Եվրոպական դատախազների խորհրդակցական խորհուրդը (CCPE), դատավորների  
և դատախազների միջև փոխհարաբերությունների վերաբերյալ տեսակետ  
ներկայացնելու Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի պահանջով,  
համաձայնեց.

1. Արդարադատության համակարգի արդար, անկողմնակալ և արդյունավետ  
կառավարման միջոցով օրենքի գերիշխանության ապահովումը բխում է  
հասարակության շահերից: Դատավարության բոլոր փուլերում դատախազները և  
դատավորները պետք է ապահովեն անձի իրավունքների և ազատությունների և  
հանրային անվտանգության պաշտպանությունը, ներառյալ հարգանքը  
մեղադրյալների և տուժողների իրավունքների նկատմամբ: Քրեական հետապնդում  
չհարուցելու մասին դատախազի որոշումը պետք է բաց լինի դատական  
ուսումնասիրման համար: Տուժողները պետք է հնարավորություն ունենան  
ուղղակիորեն դիմել դատարան:

2. Արդարադատության համակարգի արդար կառավարումը պահանջում է մեղադրող  
և պաշտպանող կոմիտեի միջև հավասարության, դատարանի անկախության  
նկատմամբ հարգանքի, իշխանությունների տարանջատման սկզբունքի և  
դատարանի վերջնական որոշման պարտադիր ուժի ապահովում:

3. Արդարադատության համակարգի արդար, անկողմնակալ և արդյունավետ կառավարման երաշխիքներից մեկը հանդիսանում է դատավորների և դատախազների առանձին, բայց փոխլրացնող ծիշտ դերակատարում: Իրենց գործառույթներն իրականացնելիս, դատավորները և դատախազները պետք է երկուստեք լինեն անկախ ինչպես այլ ուժերից, այնպես էլ միմյանցից:
4. Արդարադատության համակարգը պետք է իր տրամադրության տակ ունենա համապատասխան կազմակերպական, ֆինանսական, մարդկային ռեսուրսներ:
5. Դատավորների և, առկայության դեպքում, երդվյալ ատենակալների, հիմնական խնդիրը դատախազության կողմից քննության բերված գերծերի պատշաճ լուծումն է, առանց դատախազության, պաշտպանության կամ ցանկացած այլ ուժի կողմից անհարկի ճնշման:
6. Դատախազության կողմից օրենքի կիրառման և, եթե կիրառելի է, մինչդատական փուլում իր հայեցողությամբ գործելու լիազորությունները պահանջում են, որ դատախազները օրենքով լինեն առավելագույնս ինչպես և դատավորները: Իրենց որոշումները կայացնելիս դատախազները պետք է լինեն անկախ և ինքնուրույն՝ իրենց գործառույթները արդար, օբյեկտիվ և անկողմնակալ կատարելով:
7. CCJE և CCPE հղում է կատարում Մարդու իրավունքների եվրոպական դատարանում առկա նախադեպերին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի Յոդվածի 5 §3 և Յոդված 6 մասով: Մասնավորապես, հղում է կատարվում այն որոշումներին, որոնցով Դատարանը օրինական է ճանաչել է օրենքով դատական իշխանություն կատարելու լիազորություն ունեցող պաշտոնյաների գործադիր իշխանությունից և դատավարության կողմերից անկախ լինելու պահանջը, որը, սակայն, չի բացառում աստիճանակարգությունը: Դատախազների կողմից դատական իշխանությանը բնորոշ գործառույթների իրականացում պետք է վերաբերեն միայն նվազագույն սամկցիաներ ենթադրող գործերի, չեն կարող նույն գործի շրջանակներում իրականացվեն հետապնդման գործողույթի հետ համատեղ, և չպետք է խոչընդոտներ ստեղծի մեղադրյալի՝ դատական գործառույթներ իրականացնող անկախ և անկողմնակալ մարմնի կողմից իր գործը լուծելու իրավունքի պաշտպանությանը:

8. Դատախազների անկախ կարգավիճակի ապահովումը, մասնավորապես, պահանջում է, որ:

- իրենց գործառույթները իրականացնելիս դատախազները չեն պետք է ենթարկվեն ճնշման կամ միջամտության դատախազությունից դուրս ցանկացած ուժի կողմից,
- դատախազների հավաքագրումը, կարիերան, պաշտոնավարման ընթացքում անվտանգության ապահովումը՝ ներառյալ փոխադրումները, պետք է իրականացվեն միայն օրենքի համաձայն և իրենց համաձայնությամբ, իսկ վարձատրությունը պետք է պաշտպանված լինի օրենքի կողմից տրամադրվող երաշխիքների միջոցով:

9. Իրավական պետությունում, որտեղ դատախազության համակարգը աստիճանակարգային է, դատախազության համակարգի արդյունավետությունը ուղղակիորեն կապված է դեկավարության ցուցումների թափանցիկության, հաշվետու լինելու և պատասխանատվության հետ: Առանձին դատախազներին տրվող հանձնարարականները պետք է լինեն գրավոր, օրենքի համաձայն, և երբ անհրաժեշտ է, հանրության համար հասանելի ուղեցույցների և չափանիշների: Օրենքով սահմանաված դատախազի քրեական հետապնդում հարուցելու կամ չհարուցելու մասին որոշումը կայացնելիս նա պետք է լինի անկողմնակալ և օբյեկտիվ: Ցանկացած պարագայում, համապատասխան ուշադրություն կենտրոնում պետք է լինեն տուժողի իրավուքները:

10. Արդարադատության համակարգի արդյունավետ կառավարումն ապահովելու համար կարևոր է նաև իրավական գործընթացի մասնակից պրոֆեսիոնալների կողմից ընդունված իրավական սկզբունքների և էթիկայի կանոնների փոխանակումը: Վերապատրաստումները, այդ թվում նաև կառավարումն իրականացնող անձանց վերապատրաստումը, դատավորների և դատախազների իրավունքն է և պարտականությունը: Դրանք պետք է կազմակերպվեն անկողմնակալ և պարբերաբար, դրանց արդյունավետությունը պետք է գնահատվի օբյեկտիվորեն: Անհրաժեշտության դեպքում դատավորների, դատախազների և փաստաբանների համատեղ վերապատրաստման ծրագրերը կարող են նպաստել արդարադատության առավել բարձր որակի ապահովմանը:

11. Հասարակության շահերից է բխում, որ լրատվամիջոցները հանրության տեղեկացնելու նպատակով ապահովվեն արդարադատության համակարգի գործունեության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությամբ: Իրավասու մարմինները տեղեկատվությունը տրամադրելիս պետք է հաշվի առնեն,

մասնավորապես, մեղադրյալի անմեղության կանխավարկօքը, արդար դատավարության իրավունքը, դատավարության մասնակից բոլոր անձերի անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը: Դատավորները և դատախազները պետք է մշակեն մասնագիտական ուղեցույցներ կամ արդյունավետ պրակտիկայի կանոններ, որոնք կարգավորում են նրանց հարաբերությունները լրատվամիջոցների հետ:

12. Դատախազները և դատավորները հանդիսանում են դատական հարցերով միջազգային համագործակցության հիմնական դերակատարները: Փոխադարձ վստահության հաստատումը տարբեր երկրների իրավասու մարմինների միջև անհրաժեշտություն է: Այս ենթատեքստում պարտադիր է, որ դատախազների կողմից միջազգային համագործակցության միջոցով ստացվող և դատավարության ընթացքում օգտագործվող տեղեկությունները, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների արդյունավետ պաշտպանության տեսանկյունից իրենց բովանդակությամբ և ծագումով լինեն թափանցիկ, հասանելի դատավորներին և այլ կողմերի համար:

13. Անդամ պետություններում, որտեղ դատախազները օժտված են նաև քրեական օրենքի շրջանակներից դուրս գործառույթներով, վերը նշված սկզբունքները վերաբերում են նաև այդ գործառույթներին:

# Բացատրական գրություն

## Նախաբան

ա/ Կարծիքի նպատակը

1. Օրենքի գերիշխանության վրա կառուցված ժողովրդավարական պետության կարևորագույն նպատակն է. Երաշխավորել հիմնարար իրավունքները և ազատությունները, ապահովել բոլորի հավասարությունը օրենքի առջև համաձայն, մասնավորապես, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի (ECHR), ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի: Նաև կարևոր է հասարակությունում ապահովել անվտանգություն և արդարադատություն հանցավոր վարքագծի դեմ արդյունավետ պայքարի միջոցով: Ժողովրդավարական պետության ներսում հասարակության անվտանգությունը Երաշխավորում է նաև հանցավոր վարքագծի համար նախատեսված պատիժների արդյունավետ կիրառումը:
2. Այսպիսով, պետության պարտականությունն է ստեղծել և զարգացնել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի վրա հիմնված արդարադատության արդյունավետ համակարգ: Այն պարագայում, երբ տվյալ համկարգը ներգրավում է տարբեր նասնակիցների ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ոլորտից /փաստաբաններ/, նրա անկախ և անկողմնակալության ապահովման հիմնական դերակատարները դատավորներն ու դատախազներն են:
3. Իր նախորդ Կարծիքների մեջ CCJE և CCPE դիտարկել են արդարադատության արդյունավետության բազմաթիվ ասպեկտներ՝ շեշտադրելով մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները: Պետք է ընդգծել, որ դատավորների և դատախազների, այդ թվում նաև քրեա-իրավական ոլորտի սահմաններից դուրս գործառությներ իրականացնող դատախազների, միասնական նպատակը արդար, անկողմնակալ և արդյունավետ արդարադատության ապահովումն է: Այս տեսակետի նորարարությունը կայանում է նրանում, որ այն մշակվել էր դատավորների և դատախազների կողմից, որոնք ներկայացնում էին իրենց պետությունների գործընկերներին, և առնչվում էր այնպիսի հարցերին, որոնց վերաբերյալ

դատավորները և դատախազները համաձայնության էին եկել՝ հենվելով պրակտիկ փորձի վրա:

4. Այսպիսով, Կարծիքը կենտրոնանում էր, մասնավորապես. անկախության, անձնական իրավունքների և ազատությունների նկատմամբ հարգանքի, օբյեկտիվության և անկողմնակալության, էթիկայի և դեռնտուոգիայի, վերապատրաստման, լրատվամիջոցների հետ փոխհարաբերությունների վրա:

5. Սույն Կարծիքը պետք է ընկալվի դատական գործընթացի տարբեր փուլերում մասնագիտական գործունեություն իրականոցնող տարբեր անձանց փաստաբանների, դատական փորձագետների, դատարանում ծառայողների, դատական հարկադիր կատարողների, ոստիկանության հետ դատավորների և դատախազների փոխհարաբերությունների ենթատեքստում, ինչպես առաջարկվում է Եվրոպայի դատավորների գործողության համընդհանուր շրջանակների պլանում՝ ընդունված 2001թ. փետրվարի 7-ին Նախարարների կոմիտեի կողմից, ինչպես նաև 2000թ. հոկտեմբերի 6-ին ընդունված «Դատախազության դերը քրեական արդարադատության համակարգում» Նախարարների խորհրդի թիվ (2000) 19 հանձնարարականում:

## թ. Ազգային համակարգերի տարբերությունները

6. Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում, շատ իրավական համակարգեր տարբեր են: Դրանք են.

- Սովորական իրավունքի համակարգ, որտեղ առկա է հստակ տարանջատումը դատավորների և դատախազների միջև, և քննությունը վարելու լիազորությունը չեն համատեղվում այլ գործառույթների հետ,
- Մայրամաքային - Եվրոպական իրավունքի համակարգը, որտեղ մեկը կարող է ունենալ տարբեր տեսակներ, որում կամ դատավորներն ու դատախազները միասնաբար հանդիսանում են «դատական կորպուսի» ներկայացուցիչներ, կամ ընդհակառակը, միայն դատավորներն են պատկանում նշված կորպուսին:

Ի հավելումն, տարբեր համակարգերում, դատախազությունը կարող է լիակատար կամ սահմանափակ ինքնուրույն լինել գործադիր իշխանության նկատմամբ:

7. Տվյալ Կարծիքը նպատակ ունի բացահայտել համընդհանուր սկզբունքները և մոտեցումները, եթե դիտարկվում են ընդհանուր գծերն ու տարրերությունները:

8. Դատավարության մասնակից կողմերից դատարանի անկախության երշխիքներից մեկը գործառույթների տարանջատումն է: Անկողմնակալությունը, ինչպես ասվում է CCJE-ի «Դատարանների անկախության և դատավորների անփոփոխելիության ստանդարտների մասին» թիվ 1 Կարծիքի մեջ /2001թ./, առաջինն է դատավորի պաշտոնի ինստիտուցիոնալ երաշխիքների շարքում: Ավելին, այն ենթադրում է, որ դատախազությունն է կրում ապացուցման պատասխանատվությունը և մեղադրական ակտի ներկայացումը, որն էլ դատավարական երաշխիքներից առաջինն է:

9. Բոլոր համակարգերում դատավորների և դատախազների դերերը տարբեր են: Նրանց առաքելությունները ամեն դեպքում փոխվածնոր բնույթ են կրում: Չկան որևէ աստիճանակարգային հարաբերություններ դատավորների և դատախազների միջև:

10. Դատախազության անկախությունը անխուսափելիորեն հանդիսանում է դատարանների անկախության հետևանք: Կասկածյալների, մեղադրյալների և տուժողների իրավունքների պաշտպանության և ապահովման հարցում դատախազի դերը լավագույնս կարող է իրականացվել, եթե որոշումները կայացնելիս դատախազը գործադրից և օրենսդրից անկախ է և եթե դատավորների և դատախազների հստակ դերակատարումը ճիշտ վերահսկվում է: Օրենքի գերիշխանության վրա հիմնված ժողովրդավարական պետություններում դատախազության քաղաքականության հիմքերը ապահովվում են օրենքով:

#### **գ. Գործառույթների առանձնահատկությունները**

11. Դատախազներն ու դատավորները պետք է իրենց գործառույթներն իրականացնեն արդար, անկողմնակալ, օբյեկտիվ և հետևողական, պետք է հարգեն և ձգտեն պաշտպանել մարդու իրավունքները և ջանքեր գործադրեն որպեսզի արդարադատության համակարգը գործի արդյունավետ:

12. Իրենց գործառույթներն իրականացնելիս դատախազները հիմնվում են կամ իրենց հայեցողական հետապնդման /հնարավորության սկզբունքը/ կամ պարտադիր հետապնդման համակարգի վրա /օրինականության սկզբունք/, բայց երկու դեպքում էլ դատխազները ոչ միայն գործում են ամբողջ հասարակության շահերից ելնելով,

այլ նաև կատարում են առանձին անձանց, մասնավորապես մեղադրյալների, որոնց համրեաւ պետք է իրականացվում է արդարադատությունը, ինչպես նաև հանցագործության տուժողների, որոնց իրավունքները նույնպես պետք է լիակատար կերպով հաշվի առնվեն: Այս իմաստով և առանց ուժերի հավասարության հարցի նկատմամբ նախատրամադրվածության, դատախազը չի կարող ընկալվել որպես այլ կողմերին հավասար կողմ: Դատախազները պետք է պատշաճ կերպով հաշվի առնեն նաև տուժողների կարծիքները և անհանգստությունները և միջոցներ ձեռք առնեն տուժողներին տեղյակ պահելու իրենց իրավունքների և դատավարության ընթացքի մասին: Նրանք չպետք է հարուցեն կամ շարունակեն քրեական հետապնդումը, եթե քննությամբ ձեռք բերված ապացույցները չեն հիմնավորում մեղադրանքը:

#### **դ. Միջազգային փաստաթղթեր**

13. Եվրոպայի խորհրդի և նախադեպային Դատարանի տարբեր փաստաթղթեր ուղակիրեն կամ անուղղակիրեն անդրադառնում են դատավորների և դատախազների փոխհարաբերություններին:

14. Առաջինն ու ամենականորն այն է, որ Դատարանը դատավորների առջև խնդիրներ է դնում միայն ելնելով դատավորների իրավասությունների սահմաններից, որպես իրավունքների և ազատությունների երաշխավորների՝ տես Հոդված 5 /ազատության և անվտանգության իրավունք/ և Հոդված 6 /արդար դատավարության իրավունք/, սակայն այս ամենը վերաբերում է նաև դատախազներին /Հոդված 5-ի §1ա և 3, Հոդված 6/:

15. Դատարանը, որի խնդիրներից մեկը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի մեկնաբանումն է, քազմաթիվ որոշումներ է կայացրել դատավորների և դատախազների միջև փոխհարաբերությունների վերաբերյալ:

16. Մասնավորապես. Դատարանը քննել է միևնույն գործով որպես դատախազ և դատավոր ծառայած անձանց վերաբերյալ հարցը /1982թ. Իոկտեմբերի 1 վճիռ, Փիերսակը ընդդեմ Բելգիայի գործով /Persack v. Belgium/, §§30-32/, Դատարանը սահմանել է, որ ոչ մի քաղաքական ճնշում չպետք է գործադրվի դատարանների կամ քրեական հետապնդում իրականացնող մարմինների վրա /2008թ. Գետրվարի 12 վճռով, Գուջան ընդդեմ Մոլդովայի գործով /Gaja v. Moldova/, §§ 85-91/, Դատարանը սահմանել է խոսքի ազատության ենթաթեքստում դատավորներին և

դատախազներին պաշտպանելու անհրաժեշտությունը /2008թ. հունվարի 8-ի վճռով, Սայջիլի և մյուսները ընդդեմ Թուրքիայի գործով/Saygili and Others v. Turkey/, §§ 34-40/, սահմանել է դատարանների և դատախազության ստորաբաժանումների դատավարական պարտականությունը քննել, հետապնդել և պատժել մարդու իրավունքների խախտումների դեպքերը /2007 մայիսի 15 վճռով, Ռամսահայն և մյուսները ընդդեմ Նիդերլանդների գործով /Ramsahai and Others v. Netherlands/, §§ 321-357/, քննել է դատախազության իշխանությունների ներդրումը նախադեպային իրավունքի ստանդարտիզացիային /2008թ. հունիսի 10-ի վճռով, Մարտինս դե Կաստրո և Ալվես Կորրեյա դե Կաստրոն ընդդեմ Պորտուգալիայի գործով /Martins de Castro and Alves Correia de Castro v. Portugal/, §§ 51-66/:

17. Քրեական դատավարության ոլորտում Դատարանը ուսումնասիրել է դատախազության կարգավիճակը և լիզորությունները և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3որդված 5 §3 պահանջները /այլ պաշտոնատար անձանց վերաբերյալ, որոնք «օրենքով լիզորված են իրականացնելու դատական իշխանություն»/, տարբեր փաստացի իրավիճակների ենթատեքստում /տես՝ նաև 1979թ. դեկտեմբերի 4 վճիռը, Շիզերը ընդդեմ Շվեյցարիայի գործով /Schiesser v. Switzerland/, §§ 27-38/, Ղե Զոնգ Բալժետը և Վան դեր Բրինկը ընդդեմ Նիդերլանդների գործով /De Jong Baljet and Van den Brink v. Netherlands/, §§ 49-50, Աստենովն ու մյուսները ընդդեմ Բուլղարիայի գործով /Assenov and Others v. Bulgaria/, §§ 146-150, Նիերբալան ընդդեմ Լեհաստանի գործով /Niedbala v. Poland/, §§ 45-47, Փանտեան ընդդեմ Ռումինիայի գործով /Pantea v. Romania/, §§ 232-243, և 2008թ. հուլիսի 10-ի վճիռը Մեդվեդյան և մյուսները ընդդեմ Ֆրանսիայի գործով /Medvedyev and Others v. France/, §§ 61, 67-69: Դատարանը նաև ուսումնասիրել է դատախազության դեկավարության կարգավիճակի, իրավասությունների, հսկողական լիզորությունները հեռախոսային գաղտնալսումներ իրականացնելիս /2007թ. ապրիլի 26-ի վճիռը, Դիմիտրու Փոփեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով /Dumitru Popescu v. Romania/, §§ 68-86/, Գերագույն դատարաններում լսումներին դատախազության դեկավարության ներկայության խնդիրը /1991թ. հոկտեմբերի 30-ի վճիռը, Բորգերսը ընդդեմ Բելգիայի գործով /Borgers v. Belgium/, §§ 24-29 և Ֆոնթեյն և Բերլինը ընդդեմ Ֆրանսիայի գործով/Fontaine and Berlin v. France/, §§ 57-67/:

18. Վերջապես, քրեա-իրավական ոլորտից դուրս, Դատարանը ունի լավ կազմավորված նախադեպեր «ներկայության հայեցակարգի» վերաբերյալ, որի համաձայն դատախազների մասնակցությունը Գերագույն դատարաններուն գործի

քննությանը հակասում է Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի Հոդված 6 § 1 դրույթներին /1996թ. փետրվարի 20-ի վճիռը, Լոռ Մաշադոն ընդրեմ Պորտուգալիայի գործով /Lobo Machado v. Portugal/, §§ 28-32, և 2006թ. ապրիլի 12-ի վճով, Մարտինին ընդրեմ Ֆրանսիայի գործով /Martinie v. France/, §§ 50-55/:

#### **19. Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված այլ փաստաթղթեր.**

- Դատավորների անկախության, արոյունավետության և դերի մասին Նախարարների կոմիտեի թիվ 12 հանձնարարականը, որը վերաբերում է բոլոր այն անձանց, ովքեր իրականացնում են դատական գործառույթներ, ճանաչում է կապը դատավորների և դատախազների միջև, հատկապես այն երկրներում, որտեղ վերջիններս ունեն դատական լիազորություններ:
- Դատախազների դերը քրեական արդարադատության համակարգում Նախարարների կոմիտեի թիվ 19 /2000/ հանձնարարականը, որն անդրադառնում է դատավորների և դատախազների միջև փոխհարաբերություններին՝ ընդգծելով այն հիմնական սկզբունքները, որոնք վճռական դեր ունեն այն հարցում: Համաձայն հանձնարարականի, դատավորների և դատախազների միջև փոխհարաբերությունները միանշանակ նպաստում են դատախազների և դատավորների առջև դրված խնդիրների պատշաճ կատարմանը: Այն մասնավորապես շեշտադրում է պետությունների պարտականությունը «կիրառել համապատասխան միջոցներ ապահովելու, որ դատախազների իրավական կարգավիճակը, իրավասությունները, դատավարական դերը սահմանվեն օրենքով և որևէ կասկած չհարուցեն դատարանների դատավորների անկախության և անկողմնակալության հարցում»:
- Քրեական արդարադատության պարզեցման վերաբերյալ Նախարարների կոմիտեի թիվ 18 /87/ հանձնարարականը անդրադառնում է այնպիսի լիազորությունների, որոնք նախկինում եղել են միայն դատավորների, իսկ ներկայումս հանդիսանում են դատախազության լիազորություններ: Այս նոր հանձնարարականները ստեղծում են նոր պահանջներ դատախազության աշխատանքների կազմակերպման և նրա գործառույթների իրականացման համար:

## **Դատավորների և դատախազների կարգավիճակ**

**ա. Դատավորների և դատախազների անկախությունը ներքին և արտաքին ուժերից.  
օրենքի գերիշխանությունը որպես անկախության երաշխիք**

20. Դատավորները և դատախազները պետք է անկախ լինեն մինյանցից, ինչպես նաև պետք է անկախ լինեն իրենց գործառույթներն իրականացնելիս: Արդարադատության համակարգի ներսում, ինչպես նաև հասարակությունում ընդուհանուր առմամբ դատավորներն ու դատախազները իրականացնում են տարբեր գործառույթներ: Ամեն դեպքում, առկա են ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ անկախության տարբեր հեռանկարներ /Հոչակագիր, § 5/:

21. Դատական համակարգը հիմնված դատարանի ցանկացած արտաքին ուժից կամ ցանկացած աղբյուրից եկած ցուցումներից անկախ լինելու սկզբունքի, ինչպես նաև համակարգի ներսում աստիճանակարգության բացակայության վրա: Դատավորների, և առկայության դեպքում, երդվյալ ատենակալների դերն է ապահովել դատախազության մարմինների և կողմերի բերած գործերի պատշաճ լուծումը: Սա ներառում է նաև դատախազության կամ պատպանող կողմերից անկախության ապահովումը: Դատավորները, դատախազները և փաստաբանները պետք է հարգեն մինյանց դերերը /Հոչակագիր, §5/:

22. Դատավորների անկախության հիմնարար սկզբունքը ամրագրված է Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի Յոդված 6-ում և շեշտադրվել է ԵՌԽՆ նախորդ կարծիքներում:

23. Դատարանի պատասխանատու է կայացնել վերջնական որոշում մեղադրվող անձի վերաբերյալ և դատավարությունը իրականացնել օրենքի սահմաններում: Դատարանի և դատական իշխանության անկախ է այլ պետական իշխանություններից: Սա, ընդհանուր առմամբ, չի վերաբերում դատախազներին, որոնք պատասխանատու են քրեական հետապնդում հարուցելու և շարունակելու համար:

24. CCJE և CCPE հղում է կատարում Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում առկա նախադեպերին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների Եվրոպական կոնվենցիայի Յոդված 5 §3-ի և Յոդված 6-ի մասով:

Մասնավորապես, այն հղում է կատարում Շիգերն ընդդեմ Շվեյցարիայի գործով վճռին, որտեղ Դատարանը օրինական է ճանաչում գործադիր իշխանությունից և կողմերից «օրենքով դատական իշխանություն իրականացնելու լիազորությամբ օժտված ցանկացած պաշտոնյայի» անկախության պահանջը, որը, սակայն, չի բացառում աստիճանակարգությունը առավել բարձր դատական պաշտոնյայի նկատմամբ /Կոնվենցիա, §7/:

25. Որոշ անդամ պետություններում դատախազներին վերապահված է որոշ ոլորտներում վերջնական որոշում կայացնելու լիազորություն քրեական հետապնդման կամ որոշակի շահերի պաշտպանության փոխարեն: Դատախազների կողմից դատական իշխանությանը բնորոշ գործառույթների իրականացումը պետք է վերաբերի միայն նվազագույն սանկցիաներ ենթադրող գործերին, նման գործառույթները չեն կարող նույն գործի շրջանակներում իրականացվեն հետապնդման գործառույթի հետ համատեղ, և չպետք է խոչընդոտներ ստեղծեն մեղադրյալի՝ դատական գործառույթներ իրականացնող անկախ և անկողմնակալ մարմնի կողմից իր գործը լուծելու իրավունքի պաշտպանությանը: Ոչ մի դեպքում դատախազները չպետք է լիազորված լինեն այնպիսի վերջնական որոշումներ կայացնել, որոնք սահմանափակում են անձի ազատությունները, այդ թվում՝ ազատազրկում առանց դատավորին կամ դատարանին դիմելու իրավունքի /Բոչակագիր, §7/:

26. Դատախազությունը անկախ մարմին է, որի գործումնեությունը առավելագույնս պետք է հիմնված լինի օրենքի վրա: Ժողովրդավարական պետություններում ոչ խորհրդարանը, ոչ կառավարությունը չպետք է ձգտեն ազդել քրեական հետապնդմանը վերաբերող դատախազների կողմից ընդունվող որոշումների վրա կամ ճնշում գործադրեն դատախազների վրա որոշումները փոխելու նպատակով /Բոչակագիր, §8 և 9/:

27. Դատախազների անկախությունը պարտադիր է իրենց առաքելությունը կատարելու համար: Այն ուժեղացնում է դատախազների դերը իրավական պետությունում և հասարակության ներսում, ինչպես նաև երաշխիքներ է ապահովում արդարադատության համակարգի արդարության, արդյունավետության և դատական համակարգի անկախությունից բխող բոլոր առավելությունների կյանքի կոչման համար /Բոչակագիր, § 3 և 8/: Այսիպիսով, դատավորների անկախության նման, դատախազների անկախությունը շնորհված բացառիկ իրավունք կամ առավելություն

չէ, որը բխում է դատախազների շահերից, երաշխիք է, որը բխում է հանրային և անհատական շահերը պաշտպանող արդար, անկողմնակալ և արդյունավետ արդարադատության համակարգի շահերից:

28. Դատախազների գործառույթները՝ պարտադիր կամ հայեցողական հետապնդման ձևով, տարբեր են յուրաքանչյուր պետությունում, կապված այն դիրքի հետ, որ դատախազներն ունեն ինստիտուցիոնալ համակարգում և քրեական դատավարության գործընթացում:

29. Անկախ կարգավիճակից, դատախազները պետք է ունենան լիարժեք ֆունկցիոնալ անկախություն իրենց իրավական դերը կատարելիս: Դատախազների հաշվետու լինելը ապահովելու և քրեական դատավարությունը ոչ պատշաճ և հայեցողական ձևը կանխելու նպատակով, դատախազները իրենց դատախազական գործառույթների իրականացման առումով պետք է առաջնորդվեն թափանցիկ ուղեցույցներով /Հոչակագիր, §9/:

30. Այս առումով, CCJE և CCPE ցանկանում է վկայակոչել Հանձնարարական թիվ 19 /2000/, որը ճանաչում է, որ արդար դատավարության իրավունքի, հետևողականության, արդյունավետության ապահովման համար, դատախազության գործունեության առումով պետությունները պետք է ձգտեն ստեղծել ընդիանուր սկզբունքներ և չափանիշներ, որոնք կծառայեն որպես անհատական գործերով դատախազների կողմից որոշումների կայացման ուղեցույցներ:

31. Դատախազներին ցուցումները պետք է տրվեն գրավոր, օրենքի պահանջներին համապատասխան, իսկ երբ անհրաժեշտ է, հանրության կողմից ճանաչված դատախազության ուղեցույցների և չափանիշների համաձայն:

32. Քրեական հետապնդում հարուցելու կամ չհարուցելու մասին որոշումները պետք է լինեն իրավական տեսանկյունից ողջամիտ: Օրենքով նախատեսված հետապնդում հարուցելու կամ չհարուցելու մասին որոշումը պետք է կայացվի անկողմնակալ և օբյեկտիվ, անկախ նրանից այն կայացվել է դատախազության, թե անկախ դատական մարմնի կողմից: Պետք է հաշվի առնվեն տուժողի իրավունքները, ինչպես նաև ցանկացած այլ անձի իրավական շահերը /Հոչակագիր, §9/:

33. Դատավորների և դատախազների գործառույթների փոխլրացնող բնույթը նշանակում է, որ երկուսն ել գիտակցում են, որ անկողմնակալ արդարադատությունը պահանջում է հավասարություն դատախազների և պաշտպանությունը իրականացնող կողմերի միջև, և որ դատախազները բոլոր դեպքերում պետք է գործեն ազնիվ, օբյեկտիվ, անկողմնակալ: Դատավորները և դատախազները պետք է միշտ հարգանք դրսնորեն կասկածյալի, մեղադրյալի և տուժողների ազնվության նկատմամբ /Հոչակագիր, §2 և 6/:

34. Դատավորի և դատախազի անկախությունը անբաժանելի կերպով կապված են օրենքի գերիշխանության հետ: Դատավորները և դատախազները գործում են հանրային շահերից ելնելով, հասարակության և այն քաղաքացիների անունից, որոնք ցանկանում են, որ իրենց իրավունքներն ու ազատությունները ապահովված լինեն բոլոր տեսանկյուններով: Նրանք առնչվում են մարդու իրավունքների այնպիսի գգայուն ոլորտների հետ, ինչպիսիք են անձի ազատությունները, անձնական կյանքը, սեփականության պաշտպանությունը և այլն: Դատախազը պետք է վստահ լինի, որ ապացույցները ձեռք են բերվել և դատավարությունը հարուցվել է օրենքի պահանջներին համապատասխան: Այդ ընթացքում, դատախազները պետք է առաջնորդվեն Մի կոնվենցիայի և այլ միջազգային իրավական փաստաթղթերով, որոնք ամրագրում են, հատկապես անմեղության կանխավարկածի նկատմամբ հարգանք, պաշտպանության և արդար դատավարության իրավունքները: Դատավորները պետք է համոզվեն, որ այդ սկզբունքները պաշտպանված են:

35. Դատախազները կարող են հղում կատարել օրենքով սահմանված դատավորների գործողություններին և միջնորդություններին և դատավորին ներկայացնել փաստեր և օրենքի դրույթներ, դատախազը չի կարող որևէ կերպ միջամտել դատավորների կողմից որոշումների կայացմանը և պարտավոր է հետևել դատավորների վերջնական որոշումներին: Դատախազը չի կարող հանդիմանալ նման որոշումների իրականացմանը ավելին, քան դատարանին բողոքարկելու միջոցով, ինչպես դա սահմանված է օրենքով /Հոչակագիր, § 4 և 5/:

36. Դատախազների և դատավորների գործունեությունը և վարքագիծը պետք է որևէ կասկած չհարուցեն իրենց օբյեկտիվության և անկողմնակալության առումով: Իրենց գործառույթները իրականացնելիս դատավորները և դատախազները պետք է անկախ լինեն, ինչպես նաև անկախ լինեն մինյանցից: Դատավարության կողմերի և հասարակության աչքին, պետք է նշույլ անգամ չլինի դատավորների և

դատախազների միջև պայմանավորվածության առկայության կամ նրանց գործառույթների վերաբերյալ թյուր կարծիք:

37. Վերը նշված սկզբունքների իրականացումը պահանջում է, որ դատախազները օերնքով լինեն առավելագույնս պաշտպանված, ինչպես ու արված է դատավորների դեպքում: Դատավորների և դատախազների առաքելությունների փոխլրացումն ու նմանությունը առաջացնում է նրանց կարգավիճակի հարցում նույնատիպ պահանջներ և երաշխիքներ, մասնավորապես, հավաքագրման, կարիերայի, կարգապահության, փոխադրման /որը պետք է իրականացվի միայն օրենքի համաձայն կամ նրանց համաձայնությամբ/, վարձատրության, գործառույթների դադարեցման, մասնագիտական ասցիացիաներ ստեղծելու ազատության վերաբերյալ /Հոչակագիր, § 8/:

38. Դատավորները և դատախազները, իրենց պետություններում գործող համակարգի համաձայն, պետք է ուղակիորեն կապված լինեն իրենց մարմինների ղեկավարության հետ: Այս նպատակով, բավարար ֆինանսական ռեսուրսներ, ինչպես նաև համապատասխան մարդկային և նյութական ռեսուրսներ պետք է լինեն դատավորների և դատախազների տրամադրության տակ /Հոչակագիր, § 4/:

#### բ. Դատավորների և դատախազների էթիկա և դեոնթոլոգիա

39. Դատավորները և դատախազները պետք է լինեն բարձր ազնվության, ինչպես նաև պատշաճ մասնագիտական և կազմակերպչական ունակությունների տեր անձինք լինեն: Ելնելով իրենց գործառույթների բնույթից, որոնք նրանք ընդունել են գիտակցաբար, դատավորները և դատախազները մշտապես պետք է բաց լինեն հանրային քննադատության համար և պետք է պարտավորվեն առանց նախապաշարմունքների սահմանապակեն, օրենքի համաձայն, գործի շրջանականներում հաղորդակցվելու իրենց իրավունքը: Որպես արդարադատության համակարգի կառավարման հիմնական դերակատարներ, նրանք պետք է բոլոր ժամանակներում պաշտպանեն իրենց մասնագիտության պատիվը և արժանապատվությունը և բոլոր իրավիճակներում դրսնորեն իրենց պաշտոնին արժանի վարքագիծ /Հոչակագիր, § 11/:

40. Դատավորները և դատախազները պետք է զերծ մնան այնպիսի գործողություններից կամ վարքագծից, որոնք կարող են խարխլել վստահությունը

իրենց անկախության և անկողմնակալության նկատմամբ: Նրանք պետք է գործերը ուսումնասիրեն պատշաճ կերպով և ողջամիտ ժամանակահատվածում, օբյեկտիվ և անկողմնակալ:

41. Դատախազները պետք է գերծ մնան իրապարակային մեկնաբանություններ և հայտարարություններ անելուց՝ օգտագործելով լրատվամիջոցները, որոնք կարող են տպավորություն ստեղծել, որ իրենք ուղղակի կամ անուղղակի կերպով ճնշում են գործադրում դատարանի վրա որոշում կայացնելու հարցում, կամ որը կարող է կասկածի տակ դնել դատավարության արդարությունը:

42. Դատավորները և դատախազները պետք է ձգտեն ծանոթանալ միմյանց էթիկայի ստանդարտների հետ, որոնցով առաջնորդվում են իրենց աշխատանքի մեջ: Սա կնպաստի մինյանց առաքելությունների հանդեպ հարգանքի դրսնորմանը, ավելացնելով համագործակցության շանսերը:

#### **գ. Դատավորների և դատախազների վերապատրաստում**

43. Մասնագիտական ունակությունների առավելագույն աստիճանը կարևոր նախադրյալ է դատավորների և դատախազների նկատմամբ վստահության ձևավորման համար և որի վրա հիմնվում են նրանց օրինականությունն ու դերը: Մասնագիտական վերապատրաստման ծրագրերը կարևոր տեղ ունեն, քանի որ այն բարձրացնում է արդարադատության ընդհանուր որակը /Հոչակագիր, § 10/:

44. Դատախազների և դատավորների վերապատրաստումը ներառում է ոչ միայն մասնագիտություն ստանալու համար համապատասխան գիտելիքների ձեռք բերում, այլ նաև մշտական վերապատրաստում կարիքը ամբողջ ընթացքում: Դատավորների և դատախազների վերապատրաստումը առնչվում է մասնագիտության տարբեր ոլորտներին, այդ թվում՝ դատարանների և դատախազության ստորաբաժանումների կառավարման ոլորտին: Արդարադատության համակարգի արդյունավետ կառավարման համար մշտական վերապատրաստումն անհրաժեշտ է ապահովելու համար բարձր մասնագիտական որոկավորում: Այդ առումով վերապատրաստվելը դատավորների և դատախազների ոչ միայն իրավունքն է, այլ նաև պարտականությունը /Հոչակագիր, § 10/:

45. Երբ, անհրաժեշտ է, դատավորների, դատախազների և փաստաբանների միասնական վերապատրաստման ծրագրերը ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող թեմաների շուրջ կարող են նպաստել առավել բարձր որոկի արդարադատության ապահովմանը։ Այս ընդհանուր վերապատրաստումը իրականություն է դարձնելու ընդհանուր իրավական մշակույթի ձևավորումը /Հոչակագիր, § 10/։

46. Տարբեր եվրոպական երկրների իրավական համակարգեր դատավորների և դատախազների վերապատրաստումն իրականացնում է տարբեր մոդելների համաձայան։ Որոշ երկրներ ստեղծել են ակադեմիաներ, ազգային դպրոցներ կամ այլ մասնագիտացված հաստատություններ, այլ երկրներում այդ լիազորությունը վերապահել են որևէ մարմնի։ Պետք է անցկացվեն նաև դատավորների և դատախազների վերապատրաստման միջազգային կուրսեր։ Դա կապահովի վերապատրաստում իրականացնող հաստատության ինքնուրույնությունը, քանի որ ինքնուրույնությունը երաշխիք է հանդիսանում մշակութային բազմակարծության և անկախության համար։

47. Այս ենթատեքստում, կարևոր է, որ դատավորներն ու դատախազները ուղղակիորեն նպաստեն վերապատրաստման կուրսերին։ Կուրսերը պետք է վերաբերեն ոչ միայն օրենքին և մարդու իրավունքներին, այլ նաև կառավարման մոդելներին և դատավորների ու դատախազների առաքելություններին։ Միաժամանակ, լրացուցիչ իրավաբանական և ակադեմիական մոտեցումները կարևոր են նեղ մոտեցումները բացառելու համար։ Վերջապես, վերապատրաստման որակը և արդյունավետությունը պետք է գնահատվեն պարբերաբար և օբյեկտիվորեն։

### **3. Քրեական դատավարության ընթացքում դատավորների և դատախազների դերը և գործառույթները**

#### **ա. Դատավորների և դատախազների դերը մինչդատական վարույթի ընթացքում**

48. Մինչդատական վարույթի փուլում դատավորը անկախ, կամ երբեմն դատախազի հետ մեկտեղ, հասկողություն է իրակացացնում քննչական գործողությունների օրինականության նկատմամբ, հատկապես երբ դրանք վերաբերում են հիմնարար

իրավունքներին /ձերբակալում, ազատազրկում, սեփականության բռնագրավում, հատուկ քննչական տեխնիկաների օգտագործում և այլն/:

49. Որպես կանոն, դատախազները պետք է մանրամասնորեն հետազոտեն քննության օրինականությունը և քննիչների կողմից մարդու իրավունքների պաշտպանությունը, երբ որոշում են հետապնդում սկսելու կամ շարունակելու հարցը:

50. Հանձնարարական թիվ /2000/ 19 նախատեսում է, որ երբ ոստիկանությունը գտնվում է դատախազների իշխանության տակ կամ երբ ոստիկանության կողմից կատարվող քննությունը հսկվում է դատախազների կողմից, պետությունը պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկի երաշխավորելու, որ դատախազը կարող է ցուցումներ տա, գնահատի, վերահսկի և սանկցիաներ տա խախտումների վերաբերյալ: Այն երկրներում, որտեղ ոստիկանությունը անկախ է դատախազներից, հանձնարարականը հիմնականում ենթադրում է, որ պետությունը պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկի, որպեսզի ապահովվի պատշաճ և ֆունկցիոնալ համագործակցությունը դատախազների և քննչական մարմինների միջև:

51. Նույնիսկ այն համակարգերում, որտեղ քննության հսկողությունն իրականացվում է դատախազի կողմից, որի կարգավիճակը իրեն որոշ դատական լիազորություններով է օժտում, կարևոր է, որ այս ենթատեքստում կիրառվող միջոցները, որոնք առնչվում են ազատությունների խախտումներին, մասնավորապես ժամանակավոր ձեռբակալությանը, վերահսկվեն դատավորի կամ դատարանի կողմից:

**բ. Քրեական հետապնդման և դատական լսումների ընթացքում դատավորների և դատախազների միջև փոխհարաբերություններ**

52. Որոշ երկրներում, դատախազները կարող են գործերի ընթացքը որոշել իրենց հայեցողությամբ, որ գործերը պետք է ուղարկվեն դատարան և որ գործերը կարող են լուծվել առանց դատաքննության /մեղադրյալի և տուժողի հաշտեցման, կողմերի համաձայնության, մեղադրյալի կողմից մեղքի խոստովանման իիմքերով դատավարության պարզեցված կամ կրծատված տարբերակ, միջնորդության իիման վրա և այլն/, որոնցից յուրաքանչյուրը նպաստում են դատական համակարգի բերի կրծատմանը և սահմանելով հետապնդման առաջնահերթությունները:

53. Դատախազության այնպիսի համակարգը, որն արտահայտում է արդարադատության համակարգի կառավարման արդիականացումը, սոցիալիզացիան, հումանիզացիան, ռացիոնալիզացիան, օգտակար են դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու հարցում: Մյուս կողմից, հենց որ դատախազը հնարավորություն է ստանում գործերը չներկայացնել դատարան, անհրաժեշտ է խուսափել կամայականություններից, խտրականություններից, քաղաքական ուժերի կողմից հնարավոր ճնշումներից և պաշտպանել տուժողների իրավունքները: Անհրաժեշտ է, որ ներգրավված անձինք, մասնավորապես տուժողները, օժտված լինեն իրավունքով դիմել քրեական հետապնդում հարուցելու դատախազի որոշումը վերանայելու համար: Տուժողը պետք է հնարավորություն ունենա գործը ուղղակիորեն բերել դատարան:

54. Այն երկրներում, որտեղ կիրառվում է դատախազության հայեցողական համակարգը, դատախազը պետք է զգուշորեն վերաբերվի քրեական հետապնդում հարուցելու հարցին՝ հաշվի առնելով ուղեցույցները կամ չափանիշները, որոնք ընդունվել են ապահովելու դատախազի որոշումների հաջորդականությունը:

55. Դատախազների անկողմնակալությունը դատավարության ընթացքում պետք է հասկանալ հետևյալ կերպ. նրանք պետք է գործեն արդար և օբյեկտիվ վստահ լինելու համար, որ դատարանը ապահովվել է անհրաժեշտ փաստերով և փաստարկներով, մասնավորապես, որ մեղադրյալին վերաբերող ապացույցները բացահայտվել են, պատշաճ կերպով ուսումնասիրել, որ բոլոր ապացույցները ձեռք են բերվել դատավորի կողմից ընդունված միջոցներով, համաձայն արդար դատավարության սկզբունքների և բացառել ապացույցները ձեռք բերելիս մարդու իրավունքների խախտումը, օրինակ խոշտանգումների միջոցով /Յոչակագիր §6/:

56. Դատախազը չպետք է հարուցի կամ շարունակի քննությունը, եթե անկողմնակալ քննությունը կամ ապացույցների վերանայումը ցույց են տալիս, որ մեղադրանքը անհիմն է:

57. Դատավորներն ու դատախազները դատավարության ընթացքում իրենց գործառույթներն իրականացնում են արդար դատավարության նպատակներից ելնելով: Դատավորը հսկողություն է իրականացնում դատախազների կամ քննիչների կողմից ձեռք բերված ապացույցների օրինականության նկատմամբ և կարող է արդարացնել մեղադրյալին, եթե գործում առկա են ոչ բավարար կամ անօրինական

ձեռք բերված ապացույցները: Դատախազը պետք է նաև ունենա դատարանի որոշումը բողոքարկելու իրավունք:

#### **գ. Դատավարության բոլոր փուլերում պաշտպանության իրավունքը**

58. Դատավորները պետք է կիրառեն քրեական դատավարության կանոնները հարգելով դատական պաշտպանություն ունենալու իրավունքը, տուժողների իրավունքները, կողմերի հավասարության սկզբունքը՝ բոլոր գոչերի քննության ժամանակ ապահովելով արդար դատավարությունը: /Հռչակագիր, §1, 2, 6 և 9/:

59. Պաշտոնական մեղադրանքը ունի կարևոր նշանակություն քրեական դատավարության ժամանակ. այն սկսում է գործել, երբ մեղադրյալը պաշտոնապես ստանում է գրավոր ծանուցում իրեն առաջադրված մեղադրանքի փաստացի և իրավական իհմքերի մասին /Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 1989թ. դեկտեմբերի 19-ի վճիռ, Կամասինսկին ընդդեմ Ավստրիայի գործով, § 79/: Քրեական դատավարության ընթացքում «արդար դատական քննությունը», որը պահանջվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3որդված 6 § 1-ով նախատեսում է, որ մեղադրյալը իրավունք ունի հանդես գալ բացարկներով:

60. Այն երկրներում, որտեղ դատախազները հսկողություն են իրականացնում քննության նկատմամբ, իենց դատախազներն են ապահովում մեղադրյալի իրավունքների պաշտպանությունը: Այն երկրներում, որտեղ քննությունը կատարվում է ոստիկանության, կամ մեկ այլ իրավապահ մարմնի կողմից, դատավորները հանդիսանում են անձի ազատությունների / habeas corpus – ձերբակալվածին դատարանին փոխանցելու մասին կարգադրություն/ պաշտպանության երաշխավորները, մասնավորապես մինչդատական ձերբակալման պարագայում, երբ դատավորներն ապահովում են մեղադրյալի իրավունքների պաշտպանությունը:

61. Շատ երկրներում դատավորները և դատախազները հետևել, որպեսզի իրականացվի պաշտպանության իրավունքը, երբ քննությունն արդեն ավարտվել է և սկսվել է մեղադրանքի հետազոտման գործընթացը: Այս փուլում, քննիչի կողմից կազմված՝ գործի վերաբերյալ գեկույցը ստացող դատախազը և մեղադրանքը ու ձեռք բերված ապացույցները հետազոտող դատավորները պետք է ստուգեն, որ մեղադրվող ցանկացած անձ պատշաճ կերպով, իրենց հասկանալի լեզվով,

մանրամասնորեն տեղեկացված լինեն իրենց առաջադրված մեղադրանքի էության և պատճառների մասին:

62. Կախված կոնկրետ երկրում իրենց դերից, դատախազները և դատավորները պետք է համոզվեն, որ անձը համապատասխան ժամանակ և պայմաններ է ստացել նախապատրաստելու իր պաշտպանությունը, որ պատշաճ կերպով կազմակերպված է նրա պաշտպանությունը, անհրաժեշտության դեպքում նշանակված է պետության կողմից վարձատրվող պաշտպան, անհրաժեշտության դեպքում ունի բարգնանիչ և հնարավորություն պահանջել այնպիսի գործողությունների կատարում, որոնք կարող են պարզել ճշմարտությունը:

63. Եթե գործն արդեն բերված է դատարան, դատավորի և դատախազի դերերը տարբեր են՝ կախված դատաքննության ընթացքում իրենց դերերից: Ցանկացած դեպքում, եթե պաշտպանության իրավունքի նկատմամբ հարգանքի որևէ տարր պակասում է, դատավորը կամ դատախազը, կամ երկուսը միասին՝ կախված ազգային համակարգի առանձնահատկություններից, պետք է հնարավորություն ունենան ուշադրություն հրավիրել ստեղծված իրավիճակի վրա և շտկել այն:

#### **4. Դատավորների և դատախազների հարաբերությունները քրեա-իրավական ոլորտից դուրս և գերազույն դատարանում**

64. Կախված ազգային համակարգից, դատախազները կարող են ունենալ կամ չունենալ գործառույթներ քրեա-իրավական ոլորտից դուրս: Այնտեղ, որտեղ դատախազները նման գործառույթներ ունեն, դրանք կարող են վերաբերվել քաղաքացիական, վարչական, կոմերցիոն, սոցիալական, ընտրական և աշխատանքային օրենքի կողմից կարգավորվող ոլորտներին, ինչպես նաև շրջակա միջավայրի պաշտպանության, խոցելի խմբերի /ինչպիսիք են փոքրամասնությունները, հաշմանդամներ, շատ փոքր եկամուտ ունեցող անձինք/ սոցիալական իրավունքների պաշտպանության ոլորտները: Դատախազները այս իմաստով պետք է թույլ չտան անհարկի ճնշում դատավորների վերջնական որոշման վրա /Հոչակագիր, § 13/:

65. Պետք է անդրադառնալ նաև իրենց երկրներում գերազույն դատարաններում դատախազների դերին: Այս դերը կարող է համեմատվել գլխավոր փաստաբանի դերի հետ եվրոպական համայնքների դատարաններում: Գլխավոր փաստաբանը կողմ չի

հանդիսանում և չի ներկայացնում պետությունը: Նա անկախ ուժ է, որը եզրակացություններ է ընդունում, ամեն գործով կամ կոնկրետ գործերով, հստակեցնելու համար օրենքի կարգավորման ոլորտում գտնվող ասպեկտները, ապահովելու համար օրենքի ճիշտ կիրառումը:

66. Ժողովրդավարական պետությունում, ելմելով օրենքի գերիշխանության սկզբունքից, դատախազների նշված լիազորությունները, ինչպես նաև լիազորությունների կիրառման ընթացակարգերը պետք է հստակ սահմանվեն օրենքով: Երբ դատախազները գործում են քրեա-իրավական ոլորտից դուրս, նրանք պետք է հարգանք դրսնորեն դատավորի կամ դատարանի բացառիկ լիազորության նկատմամբ և հաշվի առնեն ընդունված սկզբունքները, մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից հետևյալի վերաբերյալ.

1. դատախազության մասնակցությունը դատաքննությանը չպետք է ազդեն դատարանի անկախության վրա,
2. իշխանությունների տարանջատման սկզբունքները պետք է ապահովեն կապված քրեա-իրավական ոլորտից դուրս դատախազների գործառույթների հետ և մարդու իրավունքների պաշտպանելու դատարանի դերի հետ, մյուս կողմից,
3. դատախազները պետք է ունենան նույն իրավունքները և պարտականությունները, ինչ և դատավարության մասնակից այլ կողմերը և չպետք է ունենան որևէ առավելություն,
4. դատախազության դերը պաշտպանել հասարակության շահերը և անձանց իրավունքները չպետք է խախտի դատարանի վերջնական որոշման պարտադիր ուժ ունենալու սկզբունքը, որոշ բացառություններով համաձայն միջազգային պարտավորությունների, ներառյալ Դատարանի նախադեպերը:

Այլ սկզբունքներ, որոնք նշված են Հոչակագրում, վերաբերում են դատախազների գործառությների քրեական օրենքի շրջնակներից դուրս, *mutatis mutandis*՝ անհրաժեշտ փոփոխություններով:

## **5. Դատավորները, դատախազները և լրատվամիջոցները /Բռչակագիր, § 11/**

67. Լրատվամիջոցները կարևոր դեր են խաղում ժողովրդավարական հասարակությունում ընդհանրապես և արդարադատության համակարգի հետ կապված: Հասարակության կողմից արդարադատության համակարգի ընկալումը խորապես ազդում է, թե ինչպես են լրատվամիջոցները լուսաբանում արդարադատության համակարգի աշխատանքը: Հրապարակայնությունը նպաստում է նաև արդար դատավարությանը, քանի որ դա մասնակիցներին և մեղադրյալին պաշտպանում է արդարադատության համակարգի ոչ թափանցիկ կառավարումից:
68. Հասարակության և լրատվամիջոցների աճող ուշադրությունը քրեական և քաղաքացիական դատավարությունների նկատմամբ բերեց դատարանների և դատախազների կողմից լրատվամիջոցներին օբյեկտիվ տեղեկատվության տրամադրման ամիրաժեշտության աճին:
69. Ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից հասարակության վստահությունն է դատարանների նկատմամբ: Դատավարության հրապարակայնությունը դատարանների նկատմամբ վստահության ձևավորման միջոցներից մեկն է:
70. Եվրոպայի խորհրդի շրջանակներում այս խնդրին առնչվում են երկու հիմնական փաստաթղթեր. 1/ Քրեական դատավարության վերաբերյալ լրատվամիջոցների օգնությամբ տեղեկատվության տրամադրման մասին թիվ 13 /2003/ հանձնարարականը և CCJE /ԵՂԽԽ/ թիվ 7 կարծիքը Արդարադատությունը և հասարակությունը թեմայով /2005/:
71. Հաշվի առնելով, որ հասարակությունը իրավունք ունի հանրային հետաքրքրություն ներկայցնող հարցերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, լրագրողները պետք է ապահովվեն համապատասխան տեղեկատվությամբ, որպեսզի հնարավորություն ստանան իրազեկելու և վերլուծելու արդարադատության համակարգի գործունեությունը՝ ուղղված դատավորների և դատախազների հայեցողությանը վարույթում գտնվող գործերի վերաբերյալ և ազգային

օրենսդրության և Դատարանի նախադեպային իրավունքով նախատեսված սահմանափակումներին:

72. Լրատվամիջոցները այնպես, ինչպես դատավորներն ու դատախազները, պետք է հարգանք դրսնորեն այնպիսի հիմնարար սկզբունքների նկատմամբ, ինչպիսիք են անմեղության կանխավարկածը, արդար դատավարության իրավունքը, անձնական կյանքի իրավունքը, նշված սկզբունքների խախտումներից խուսափելու անհրաժեշտությունը և գործում ներգրավված դատավորների և դատախազների անկողմնակալությունը:

73. Քննության կամ դատական քննության տակ գտնվող գործերի լուսաբանումը լրատվամիջոցների կողմից կարող է բերել լայնածավալ միջամտության և առաջացնի անհարկի ազդեցություն և ճնշում դատավորների, երդվալ ատենակալների և դատախազների վրա: Մասնագիտական հմտությունները, բարձր էթիկական ստանդարտները և քննվող գործերի վերաբերյալ վաղաժամ մեկնաբանություններ կատարելուց ինքնասահմանափակման մեխազմիզմները անհրաժեշտ են վերը նշված մարտահրավերները հաղթահարելու համար:

74. Լրատվամիջոցների հետ կապ ունեցող աշխատակազմը, օրինակ, հասարակայնության հետ կապերի պատասխանատունները կամ դատավորների և դատախազների խոսնակները, ովքեր պատրաստվել են լրատվամիջոցների հետ աշխատելու համար, կարող են օգնել լրատվամիջոցներին տրամադրելով ճշգրիտ տեղեկատվություն դատարանի աշխատանքի և որոշումների վերաբերյալ, ինչպես նաև օգնել դատավորներին և դատախազներին:

75. Դատավորները և դատախազները պետք է փոխադարձաբար հարգեն մինյանց յուրահատուկ դերը արդարադատության համակարգում: Դատավորները և դատախազները պետք է մշակեն լավ պրակտիկայի ուղեցույցներ և ստանդարտներ յուրաքանչյուր մասնագիտության համար և լրատվամիջոցների հետ աշխատանքները կազմակերպելու: Որոշ ազգային համակարգեր նախատեսում են որոշակի էթիկայի կանոններ դատավորների համար և դատավորներին պահանջ է առաջադրվում զերծ մնալ քննվող գործով որևէ մեկնաբանություններից, որպեսզի հանրության մոտ կասկածներ չառաջանան դատավորների անկողմնակալության վերաբերյալ, և խուսափելու համար անմեղության կանավարկածի սկզբունքի խախտումից: Դատավորները պետք է արտահայտեն իրենց մոտեցումները իրենց

որոշումների միջոցով, ազատ արտահայտվելը և բառերի ընտրությունը կարևոր են, երբ դատավորները հայտարարություններ են անում լրատվամիջոցների համար օրենքի համաձայն քննվող կամ քննված գործերի վերաբերյալ: Դատախազները պետք է զգույշ լինեն, երբ մեկնաբանություններ են անում դատավորի կամ դատավճռի վերաբերյալ, երբ արտահայտում են որոշման վերաբերյալ իրենց անհամաձայնությունը:

## **6. Դատավորները, դատախազները և միջազգային համագործակցությունը**

76. Մարդու իրավունքների և իիմնարար ազատությունների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու նպատակով, կարևոր է նշել արդյունավետ միջազգային համագործակցության անհրաժեշտությունը, մասնավորապես, Եվրոպայի խորհրդի անդամ-պետությունների միջև միջազգային փաստաթղթերում, մասնավորապես Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայում ամրագրված արժեքների հիման վրա: Միջազգային համագործակցությունը պետք է կառուցվի փոխադարձ վստահության վրա: Միջազգային համագործակցության միջոցով ձեռք բերված տեղեկատվությունը, որն օգտագործվում է դատական գործընթացում, պետք է լինի թափանցիկ իր բովանդակության և ծագման առումով, ինչպես նաև հասանելի դատավորներին, դատախազներին և կողմերին: Անհրաժեշտ է խուսափել միջազգային դատական համագործակցությունը, որը տեղի է ունենում առանց դատական վերահսկողության և առանց պատշաճ կերպով հաշվի առնելու, մասնավորապես, պաշտպանության իրավունքը և անձնական տվյալների պաշտպանությունը: